№ 42. ՆՈՅԵՄԲԵՐԻ 4 (16) 1876 ՆՈՅԵՄԲԵՐԻ 4 (16) № 42.

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 5 ռուբլ, կէս տարվանը 3 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Գասուրեանի և Արասխանեանի խանութում.

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ„

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՄՇԱԿ

ԼՐԱԳՐԻ

Խմբագրութիւնը խնդրում է նոցա, որք դեռ չեն վճարել „ՄՇԱԿԻ“ ներկայ տարվայ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ, շուտով հասցնել նրան խմբագրութեանը։

Հասցէն՝ Тифлисъ, редакція армянск. газеты «Мшакъ».

ПРОДАЕТСЯ

въ книжномъ магазинѣ З. Грикурова, въ редакціи газеты „Мшакъ“ и въ магазинѣ Е. Цатурова

брошюра

„ВОСТОЧНЫЙ ВОПРОСЪ“

Д-ра Григорія Арцруни (Ред. арм. газеты „Мшакъ“).—Цѣна 5 копѣекъ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ուսուցչական դպրոց Գօրու մէջ։ — Ներքին տեսութիւն։ Թիֆլիսի Քաղաքային Վարչութեան կողմից։ Փօթի-Թիֆլիսեան երկաթուղին։ Նամակ Մոսկվայից։ Նամակ Գանձակից։ Նամակ Երևանից։ Ներքին լուրեր։ — Արտաքին տեսութիւն։ Պանիայի մասին։ Նամակ Կ. Պոլսից։ Նամակ Էրզրումից։ — Խառն լուրեր։— Յայտարարութիւններ։

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԴՊՐՈՑ ԳՕՐՈՒ ՄԷՋ

Ներկայ տարվայ սեպտեմբերի 12-ին բացվեցաւ Գօրու մէջ Անդրկովկասեան ուսուցչական դպրոց։

Մենք չենք խօսի այստեղ բացման հանդէսի մասին, որ կատարվեցաւ մեր ուսումնարանական վարչութեան պաշտօնեաների ներկայութեամբ, և որ նկարագրված է բաւական մանրաման կերպով „Кавказъ“ լրագրի № 124 մէջ, բայց կուզենայինք մի քանի խօսք ասել այդ օգտաւէտ հիմնարկութեան նշանակութեան և նպատակի մասին։

Այդ հիմնարկութեան նպատակն է պատրաստել ժողովրդական գիւղական ուսուցիչներ մեր երկրի համար, և հետևելով մանկավարժական ճիշդ հիմունքին, մեր կովկասեան ուսումնարանական վարչութիւնը վճռել է հիմնել այդ ուսուցչական սեմինարիայի մօտ երեք սկզբնական, տարրական ուսումնարաններ՝ մին ռուսաց, միւսը հայոց, երրորդը վրաց, որպէս զի մեր երկրի այդ երեք գլխաւոր ազգութիւններին պատկանող երեխաները նուիրեն իրանց ժողովրդի ուսուցիչների պաշտօնին, սկսեն ուսում առնել մայրենի լեզուով և յետոյ անցնեն միւս դասատները, որտեղ դասաւանդութիւնը կը լինի ռուսերէն լեզուով։

Երիտասարդների թիւը, որոնք ցանկութիւն են յայտնել մտնել այդ հիմնարկութիւնը, 95 էր։ Նրանցից 50 հոգի բաւականացուցիչ կերպով հարցաքննութիւն տալուց յետոյ, ընդունվեցան սեմինարիայի պատրաստական և առաջին դասատները։

Այդ ընդունված աշակերտների թիւում կան 9 ռուս, 13 վրացի, 12 իմերէթցի, 6 հայ, 2 լեհացի, 2 ինգիլոյցի, 1 ուդի, 2 գուրիացի, 2 պշաւ, 1 չերկէզ, 2 աբխազեցի, և 1 յոյն։ Պետական հաշիվով ընդունվեցան գերազանց աշակերտներից 5 ռուս, 5 հայ և 7 վրացի։ Դարձեալ պետական հաշիվով մընում են ազատ 9 վականսիա, որոնց կը լցացնեն եկող տարին։

Գօրու մէջ այդ տեսակ դպրոց հիմնելու շարժառիթն այն էր, որ ժողովրդական գիւղական ուսուցիչների պաշտօնին պատրաստվող երիտասարդները փոքրիկ և համեստ քաղաքում ապրելով՝ աւելի նուիրվին ուսմանը և ոչ թէ շռայլ կեանքին, որի մէջ հաւանական է թէ կընկնէին, եթէ սեմինարիան հիմնված լինէր Թիֆլիսում կամ Քութայիսում....

Բայց ուրիշ կողմից Գօրին, ինչպէս և համոզվեցաւ այժմ մեր ուսումնարանական վարչութիւնը, այն կողմից անյարմար յայտնվեցաւ, որ այդ քաղաքի և գաւառի հայոց ազգաբնակութիւնը թէև բազմաթիւ է, բայց բոլորովին չը գիտէ հայերէն, այլ այդ տեղերի հայերի խօսեցած լեզուն վրացերէն լինելով, անհնարին էր սեմինարիայի մօտ հայերէն տարրական դպրոց հիմնել և այս տարի միայն վրաց տարրական դպրոց բացվեցաւ։

Այդ տարրական ուսումնարանների նպատակն է սկսել երեխաների հետ դասաւանդութիւնը այն լեզուով, որ նոքա խօսում են մանկութենից, ընտանիքի մէջ։ Ուրեմն հայերը այդ կողմից իրանք մեղաւոր են։

Այդ պակասութեանը կարող է ինքն հայ հասարակութիւնը դարման տալ, եթէ իրան թանգ է իր մայրենի լեզուն, և եթէ հասկանում է հայ ժողովրդական մանկագէտ ուսուցիչներ ունենալու բոլոր նշանակութիւնը։

Թող հայերից ցանկացողները ուղարկեն մի տաս, տասն հինգ մանկութենից հայերէն խօսող երեխայ, որոնք կարող էին կազմել սեմինարիայի մէջ հայոց տարրական ուսումնարանի համար հիմք,—և ուսումնարանական վարչութիւնը խոստանում է իսկոյն բաց անել և օժանդակել մի փոքրիկ պատրաստի դումարով սեմինարիայի մօտ հիմնվելու այդ տարրական ուսումնարանի հայերէն բաժինը, որ արդէն կայ դպրոցի պրոգրամայի մէջ, բայց որ չը կարողացաւ այս տարի իրագործվել։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Թիֆլիսի Քաղաքային Վարչութիւնը յայտնում է ընդհանուր տեղեկութեանը, որ Քաղաքային Վարչութեան տնաշէն բաժինը (строительное отдѣленіе) բաց է անում իր գործունէութիւնը առաջիկայ նոյեմբեր ամսի 1-ից և որ բոլոր պլանները և ֆասադները քաղաքային շինութիւնների համար, պէտք է յիշեալ օրից ներկայացված լինեն Քաղաքային Վարչութեան հասատութեանը, վասն զի առանց այդ վաւերացման, Նահանգական վարչութեան տնաշէն բաժնից հաստատութիւնը չը ստացած շինութիւնները չեն կարող թոյլ տուած լինել։

Վարչութեան անդամ Պ. Ալխազով

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

Այսօր մենք կամենում ենք խօսել ընթերցողի հետ Փօթի-Թիֆլիսեան երկաթուղու մի շատ նշանաւոր գործի վրա։

Բոլոր մեր վաճառականները գիտեն թէ ինչ արգելքների են պատահում նրանք, ինչ դժուարութիւններ է կրում առուտուրը, երբ որ պէտք է Փօթի-Թիֆլիսեան երկաթուղով բեռները տեղափոխել Թիֆլիսից Փօթի և փոխադարձապէս։

Սուրամի շղթայի անցքով մինչև այժմ երթևեկութիւն էին անում միայն 6 վագոններից բաղկացած, այսինքն 3 հազար պուդից ոչ աւելի ծանրութիւն կրող գնացքը և այդ պատճառով բեռների շուտ տեղափոխութիւնը այնքան արգելվում էր, որ մի ժամանակ Թիֆլիսի առևտրական հասարակութիւնը պէտք է այդ մասին դանգատով դիմէր կառավարութեանը և պէտք է հեռագիր ուղարկէր այդ մասին Յարակցութեան ճանապարհների պ. մինիստրին։

Այդ հարցը՝ Սուրամի շղթայի անցքի վրա երթևեկութեան դժուարութիւնը, մինչև այժմ մեծ պակասութիւն էր կազմում Փօթի-Թիֆլիսեան երկաթուղու ամբողջ գծի կանոնաւոր գոյութեան։ Այժմ երբ պահանջ է զգացվում աւելի յաճախ երթևեկութեան մեր երկաթուղու ամբողջ գծի վրա, երկաթուղու ընկերութիւնը ստիպվեցաւ փորձ փորձել լուծել մասամբ այդ խնդիրը։ Եւ ահա այսօր առաջին անգամ փորձել են Սուրամի անցքի վրայով անցկացնել 9 վագոններ (4500 պուդ բեռնով), երկու լոկոմոտիվով՝ մինը առջևից, ֆերլի սիստեմայի և միւսը ետևից, հասարակ ապրանքի գնացքի լոկոմոտիվը։

Ընթացքը շատ դիւրին էր և նոյն իսկ զայրիվայրի վրա հրամայեցին կանգնեցնել գնացքը և այդ փորձը կատարելապէս աջողվեցաւ։ Այժմ եթէ վճռած կը լինի 9 վագոններ միշտ անցկացնել Սուրամի վրայով, ամեն բան լաւ կերթայ և բեռների երթևեկութիւնը չի ուշանայ, ինչպէս առաջ էր լինում։

Ի հարկէ դուցէ այդ աւելի թանգ կը նստի վաճառականների համար, բայց ինչ և իցէ՝ լաւ է աւելի թանգ վճարել, և չը կրել առաջվայ արգելքները....

Տեսնենք ինչ կը լինի, բայց այնու ամենայնիւ եթէ Փօթի-Թիֆլիսեան երկաթուղին կարողանայ 3 հազար պուդի տեղ 4½ հազար պուդ բեռներ տեղափոխել,—այդ կը լինի մեծ քայլ դէպի առաջ։

Յանկանում ենք աջողութիւն։

***

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

Հոկտեմբերի 24-ին

Ահա Մոսկվայի Լազարեան արևելեան լեզուաց ճեմարանի վեթսուն և մէկ տարին լրանում է։ Այս ճեմարանի նպատակն էր, ինչպէս և վերնագիրն է ցոյց տալիս, սովորեցնել արևելեան լեզուները և գլխաւորապէս հայոց լեզուն։ Զգենք մի կարճառօտ և հարևանցի հայեացք այդ ուսումնարանի ներկայի և անցեալի վերա և տեսնենք՝ ինչ օգուտ է բերել մեր ազգին, ինչպէս մարդիկ է տուել։ Ոչ ոք չէ կարող ուրանալ այն օգուտները, որ նա բերել է ազգին. այստեղից դուրս են եկել շատ հայագէտներ, ինչպէս պարոն Էմինը, Երեցփոխեանցը, Խուդաբաշեանցը, որոնք իրանց ամբողջ կեանքը նուիրել են հայոց լեզուի և պատմութեան մշակութեանը և յայտնի են իրանց գրականական աշխատութիւններով։ Իսկ վերջին ժամանակներս այդ ուսումնարանից դուրս չեն եկել յիշեալ պարոնների պէս մարդիկ։ Բնենք սրա պատճառը։ Գուցէ շատերը կորոնեն պատճառը նրանում, թէ այդ ուսումնարանը յանձնված լինելով տէրութեանը, հայոց լեզուն պէտք է կորցնի իւր նշանակութիւնը։ Ոչ, այդ սխալ կարծիք է. այն օրից երբ տէրութիւնը ընդունեց այդ ուսումնարանը իւր հովանաւորութեան տակ, նա բոլորովին ձեռնամուխ չեղաւ հայոց լեզուին, որը մինչև այսօր էլ գլխաւոր առարկայ է համարվում և հաւասար է ռուսաց լեզուին։ Ուրեմն պատճառը ինչ է, որ առաջ, երբ դասաւանդութեան կերպը կատարելագործված չէր, հայոց լեզուն աւելի ծաղկում էր և այդ ուսումնարանը տալիս էր նշանաւոր հայագէտներ, իսկ այժմ չը կան այնպիսի մարդիկ, որոնք անձնատուր լինեն հայոց պատմութեանը և լեզուին։ Ինչու ճեմարանը տալիս է համալսարաններին աշխատասէր ուսանողներ, որոնք ժամանակով դուրս են գալիս լաւ բժիշկներ, իրաւաբաններ և այլն, բայց ոչ մի հայագէտ այժմ էլ դուրս չէ գալիս։ Ճեմարանի նոր կլասիկական ուղղութիւնը պէտք է աւելի նպաստէր լեզուագիտութեանը, ուրեմն և հայոց լեզուի ուսումնասիրելուն։

Մեր կարծիքով այս յետադիմութեան պատճառը կլասիկական սխալ ուղղութիւն է և հայոց լեզուի դասաւանդութեան եղանակն է։

Մենք վերևում ասեցինք՝ թէ կլասիկական ուղղութիւնը կարող է նպաստել առհասարակ լեզուագիտութեանը և ուրեմն հայոց լեզուին։ Այո, բայց ոչ այն մեր բոլոր գիմնազիոններում ընդունված կլասիկական ուղղութիւնը, որ բոլոր ուշը դարձնելով միայն երկու հին լեզուների վերա՝ լատինական և յունաց, մոռանում է բոլոր առարկաները... Լազարեան ճեմարանում յունաց և լատինական լեզուն այնքան ծաղկած է, որ արդէն ութերորդ դասատան աշակերտները ազատ հասկանում են այդ երկու լեզուով գրվածքները։ Այս տարի մի աշակերտ Բրազիլիայի արքայի ճեմարանը այցելութեան ժամանակ, արքայի հետ լատինական լեզուով է խօսացել։ Գիմնազիոնում լատիներէն այս տեսակ իմանալու համար հարկաւոր է գոհել ոչ թէ հայոց լեզուն, բայց և այլ բոլոր առարկաները։

Երկրորդ պատճառը հայոց լեզուի յետադիմութեան այն է, որ հայ մանկունք, հայերէնը սովորում են ինչպէս մի օտար և մեռած լեզու. ճեմարանի արդէն առաջին դասատներից, թողնելով նոր լեզուն, որը աւելի ձեռնտու է և հասկանալի աշակերտներին, սովորցնում են հին լեզուն։ Այն էլ ինչպէս. կրկին հանդէս է դուրս գալիս, եթէ կարելի է այսպէս ասել, տիրացական ոճը. կրկին երևան է գալիս հին անմշակված քերականութիւնը հանդերձ իւր տաս հոլովմունքով և հոլովներով։ Ոչ ոք չէ կարող չը համաձայնվել, որ այսպիսի դասաւանդութիւնը հիմնված է սխալ մանկավարժական հիմունքի վերա։ Երբէք այս դասաւանդութիւնը մի նպատակի չի հասնի։ Այս սխալ ուղղութիւնը և դասաւանդութիւնն է պատճառը, որ բարձր դասատների ուսուցչի պ. Շահ-Ազիզեանցի տոկուն աշխատանքը մնում է ապարդիւն. նա սիրով աշխատում է սովորեցնել հայոց լեզուն, բայց առաջվայ առաջադիմութիւնը չը կայ և հայագէտները չեն դուրս գալիս, բացի սրանից աշակերտների մէջ երևում է հակակրութիւն դէպի մայրենի լեզուն։ Այս բնական է, որովհետև երբէք պ. Ս. Շահ-Ազիզեանցի աշխատանքը չի հասնի իւր նպատակին, քանի որ ճեմարանի ստորին դասատների ուսուցիչները կը շարունակեն դասաւանդութիւնը հին ոճով, հին քերականութեամբ իւր սարսափելի անմշակված կանոններով։ Հայոց լեզուն այն ժամանակ առաջ կը գնայ, երբ առաջ ստորին դասատաններում կը սովորեցնեն աշխարհաբար լեզուն, և յետոյ վերջին դասատներում հին լեզուն կուսումնասիրեն։

Հաստատ յոյս ունենք՝ որ ճեմարանի հայոց լեզուի ուսուցիչները ուշ կը դարձնեն այս սխալ ուղղութեան վերա և կաշխատեն այնպիսի հայագէտներ պատրաստել, որոնք ճեմարանը տուել է մեզ, այնպիսի հայագէտներ որոնք ժամանակս կորոշեն բռնել ամենայարգելի և ուսեալ պ. Էմինի, Երեցփոխեանցի և միւս այդպիսի պարոնների տեղը։ Ազգը գլխաւորապէս այս է սպասում Լազարեան ճեմարանից։

Այսօր Մոսկվայի հայոց եկեղեցու քահանայ հայր Սուրինեանցը սուրբ պատարագի ժամանակ կարդաց մի քարոզ, որով հրաւիրեց տեղոյս հասարակութեանը օգնել Յաճկատանի հայերին։ Քարոզի բովանդակութիւնը մօտաւորապէս այս էր։ Պատուելի հայրը հիմնելով իւր կարծիքը Աստուածային պատուիրանքի վերա «Սիրիր քո ընկերին» յայտնեց այն միտքը՝ թէ ամենայն մարդ պարտ է սիրել և օգնել իւր մերձաւորին, իւր ազգին և մարդկութեանը. առանց սիրոյ և մէկմէկու օգնելու՝ մարդկութիւնը, ազգը և քաղաքակրթութիւնը առաջ չի գնայ։ Մարդս սիրելու ամբողջ մարդկութիւնը պարտ է իւր ազգին ա

ւելի սիրել, նորան օգնել ամեն ժամանակ երբ նա օգնութեան կարօտ է. ինչպէս ռուսաց ազգը ոչինչ զոհաբերութիւն չէ խնայում իրան ազգակից սլավոնական ազգերի համար, որոնք իրենց ազատութեան համար առատ արիւն թափելով, պատերազմում են Ցաճկաց դէմ. Այս առաջաբանից յետոյ պատուելի քարոզիչը դարձաւ դէպի մեր Ցաճկաստանի հայերը, որոնց հետ մօտերս այսչափ տմարդաբար են վարուել բարբարոս տաճիկները, կոտորելով 600 հոգի, յափշտակելով նրանց կայքը, խլելով նրանցից վերջին կտոր հացը։ Առ հասարակ պատուելի քարոզիչը շատ ազդու և սրտաբուխ կերպիւ նկարագրելով մեր Ցաճկաստանցի ղբայրների տխուր դրութիւնը, յայտնեց այն միտքը, թէ մենք Ռուսաստանի հայերս պէտք է օգնենք նրանց, պէտք ոչինչ զոհ չը խնայենք նրանց համար, որովհետև մեր համակրութիւնը կարող է նրանց քաջալերել և մխիթարել։ Չը մոռացաւ յիշել մեր վնասված Ղզլարցի եղբայրներին, որոնք միշտ պատրաստ են եղել առատ զոհաբերութիւններ անել ազգօգուտ գործերի համար։ Կրկին դառնալով դէպի տաճկաստանցի հայերը, յարգելի քարոզիչը հասարակութեան ուշը դարձրեց Մոսկվայի հայ ուսանողների վերա, որոնք առաջին ստորագրութիւն բաց արին։ Ցետոյ դառնալով դէպի սուրբ սեղանը հայր Սուրենեանցը խնդրեց Աստուածանից երկար կեանք մեր Օգոստափառ Կայսրին ամենայն Ռուսաց, որի հովանաւորութեան տակ մենք վայելում ենք ազատ քաղաքական իրաւունքներ։ Ցայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը հայր Սուրենեանցին, և կը ցանկայինք որ բոլոր հայաբնակ քաղաքների քահանաները քարոզ կարդային ժողովրդին և դրդէին նորան զոհաբերութիւններ անելու մեր տաճկաստանցի եղբարց օգնելու համար։

Մի հայ

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

—

Վերջին ժամանակներս Գանձակը խօսակցութեան նիւթ դարձաւ դվարցների, փիփեցիների դարիքների և մինչև անգամ թափառական և բաղտախնդիր անհատների, որոնք հրապարակ իջնելով տեսան որ, այն Գանձակի պղտոր ջրում կարելի է ձուկը որսալ. ուստի ամենքը իրանց չափով չափեցին և կշռեցին Գանձակի հասարակութիւնը, երիտասարդութիւնը. ամենքը իրանց փորացուից ճառեցին, իրանց կողմը տաշեցին։

Գանձակի հասարակութիւնը անիրաւ է, չահասէր է, երիտասարդութիւնը յետադէմ է իւր հասարակական գործերով, անտարբեր է դէպի իւր հայրերի անիրաւ պահանջը։ Հասարակութիւնը սառն է, ընկերութիւններ չէ հիմնում, չեմարաններ չէ շինում, աղքատանոցներ չէ սահմանում, և այլն և այլն հազարաւոր դանդատներ. բայց այդ պարոններ-դարիքները երբէք չը խօսեցին իսկութիւններ, միշտ հարևանցի ակնարկեցին խնդիրներին և հէնց այն բաների մասին կամեցան ապացուցանել իրանց տրտունջները, այն խնդիրները չեղած չը բարձրացած հրատարակեցին, որոնք ընդհակառակն ժողովրդի կողմից ընդունելութիւն գտած, հասարակութեան առաջ կարևոր համարուած և իրագործելու ձեռնարկած են. սակայն արդէլքները առաջացած են միշտ անհաներից։ Ահա այդ իսկ անհաների յանցանքն է, որ դցում են հասարակութեան վերա պարոններ դարիքները։

Գանձակի հասարակութիւնը զարգացած չը լինելով, ինչպէս և այլ գաւառական հասարակութեան մեծագոյն մասը, ինքնուրոյն գործել, առանց առաջնորդող ուժի իւր հասարակական գործերը առաջ վարել չէ կարող, այլ սպասելով միշտ որ և է առաջնորդող անձի՝ իւր ազգային գործերի դեկը յանձնում է նորան, որին և ինքն հետևում է անպայմանօրէն։ Բայց կարծես Գանձակի տարաբաղդութիւնից, մինչև այսօր նորան մի ծանրաբարոյ և խոհական առաջնորդող չը պատահեցաւ։

Օրինակ՝ ասենք թէ հազիւ մի քանի տարի է որ մեր հասարակական գործերը վերանորոգվելու վրա են, բայց հէնց այդ մի քանի տարուն էլ նորան կառավարողը մեր հասարակութեան մէջ եղել է պ. Ղարիբի ակնարկած Գ. Վ. որը այդ հասարակական գործերի հետ այնպէս էր վարվում, ինչպէս իւր մառանում պահած կերակրեղէնների հետ։ Եւ ահա դորա յանցանքը այսօր հասարակութեան վերա են դցում պարոններ Ղարիքները։

Մի ժամանակ առաջարկուեցաւ քաղաքումս մի չեմարան ունենալու հարցը. սորա համար անտարբեր համարուած հասարակութիւնը համակրութեամբ ընդունելով ցուցակ կազմեց, ստորագրութիւններ և նուիրատուութիւններ եղան։ Սակայն մինչև այսօր մնաց անիրագործելի չնորհով այն չահասիրութեան, որը յայտնապէս երևան գալով յետ մղեց հասարակութիւնը *)։

Առաջարկուեց կազմել աղքատաց խնամարկութեան արկղ և ընտրել դորա համար հոգաբարձուներ։ Դարձեալ ղարիքների պախարակած հասարակութիւնը ընդունեց դորան մեծ ուրախութեամբ։ Ստորագրութիւններ բացաւ, ժողովեց աւելի քան 3000 բուբլ։ Ընտրեց նոյն իսկ հոգաբարձուներ և յանձնեց տեղական յայտորդին հաստատութեան առաջարկելու... Բայց ուր է պատասխանը...

Հասարակութիւնը աչքի առաջ ունենալով որ եկեղեցական գումարները անապահով դրութեան մէջ են, ընտրեց եկեղեցեաց երեցփոխական հաշուեսներ։ Այդ ընտրութիւնը ևս ներկայացուեցաւ հաստատութեան, բայց ուր մնաց դորա հետևանքը... Երևի այնտեղ, որ ընտրութեան թերթը Հոգևոր Կառավարութեան փոշիների տակ փտում է, իսկ ընտրուած պարոնները երազում են մանաւանդ Սուրբ-Գէորգ եկեղեցու հաշիւները, որի երեցփոխանի տեղակալը մասնակցում է այն ընտրութիւնը հաստատելու հարցում...

Եւ դեռ ևս դարիքների կարծիքով հասարակութիւնն է մեղաւոր... բայց որքան չեն ամաչում այդ տեսակ մարդիկ իրանց ամօթալի սաերով։

Այդ հասարակութեան չնորհիւ չէր որ էջմիածնապատկան կալուածները ազատուեցան խարդախութիւնից։ Դոքա չէին որ նոյն աթոռապատկան կարմանսարայի արդիւնքը, ինչպէս և նորա չնութիւնը մի աննշան դրութիւնից հասցրին որոշ քանակութեան տարեկան եկամուտի։ Նորա չնորհիւ չէր, որ Էջմիածնի «Ջամբռ» գիրքը փոշիների տակ փտելուց ազատուելով ի լոյս հրատարակուեցաւ։ Սակայն նուիրատուութիւն ունեցաւ Գանձակը ճեմարանի չինութեանը, սակայն որի ցուցակը չերևեցաւ «Արարատի» հաշուեցուցակում։ Երեմիա եպիսկոպոսը—Երուսաղեմի նուիրակը, դորա հասարակութիւնից չը ժողովեց մօտ 3000 բուբլ մի կարճ միջոցում։ Պողոս և Գրիգոր վարդապետները այդ հասարակութիւնից չը ժողովեցին մի քանի հարիւրներ իրանց վանքերի վերանորոգութեան համար։

Թող լաւ իմաստասիրեն պարոններ դարիքները և թաթոսները Գանձակի հասարակութիւնը, եթէ միայն ընդունակութիւն ունեն, և պարզ խոստովանեն որ Գանձակի հասարակութիւնը չէ մեղաւոր, այլ իրանք, որ անվերջ չողոքորթութեամբ պաշտպան են հանդիսանում հէնց այն անձնէրին, որոնք այսքան բարենպատակ հիմնարկութեանց արգելաւոր են լինում, որոնց բոլոր ապարդիւն գործունէութեան մանրամասն ցուցակը կարող եմ ներկայացնել ճիշդ թուանշաններով, եթէ հարկը կը պահանջի։ Իսկ Գանձակի հասարակութիւնը միշտ հակամիտ է եղել դէպի ընդհանուրի օգուտը և դարձեալ նոյնը կը լինի եթէ նորա քնքոյշ զգացմունքը չեն վիրաւորի չշափելի կոպտութիւններով։

Իսկ ինչ վերաբերում է երիտասարդների սառնասրտութեանը, դա մի այնպիսի անխիղճ զրպարտութիւն է, որը երբէք չէ կարող փոքր ի շատէ բարեխիղճ մարդու զգացմունքի արտայայտութիւն լինել։ Եթէ այսօր մեր երկսեռ դպրոցները կառավարվում են, այդ չնորհիւ նոյն մեղադրուած երիտասարդների նուիրականութեան է եղած, քան ուսումնարանների չատ անապահով միջոցների։ Թող կարդան պ. Եպիսկոպոսեանի հաշիւը...։

Մենք ի մխիթարութիւն այդ խեղկատակների միւս անգամ կը խօսենք Արաբլուի հողերի մասին։

Բնիկ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

16 հոկտ.

Պատերազմ... այստեղ ուրիշ բանի վերա չեն խօսում։ Կը լինի այդ թէ ոչ, այդ ոչ ոքի յայտնի չէ, միայն այդ հարցով այսօր ամենքը յափշտակուած են։ Լրագրութիւնն կարդացող կամ այսպէս ասել տեղոյս լուսաւորեալների հայեացքը զուգնթաց է լրագրութեան խօսքի հետ, արդեօք սրով թէ խաղաղութեամբ պէտք է վճռվի Բալկանեան թերակղզու խռոված դրութիւնը, այդ կը պարզի մերձաւոր ապագան։ Բայց կայ մեր քաղաքում հասարակութեան մի դաս որ կազմում են ստորին դասի ժողովուրդը և նոցա կանայքը. դրանք լուն ուղղ չինելու չատ լաւ ընդունակ են, մի ինչին լուր վերցրած մի լրագրից, կամ լսած որ և իցէ դրագրից, այդ լուրը բերանից բերան ընկած, զանազան յեղափոխութեան ենթարկուած, այնպէս կերպարանք են տալիս նրան որ կարելի է առասպելների ցուցակը անցնել։ Կանայք զռների մօտ խմբեր կազմած խօսում են տաք տաք, դատում են, հառաչում են. բայց ինչ է այդ միամիտների խօսակցութեան նիւթը՝ այժմեան Եւրոպայի պօլիտիկան, լուսաւոր աշխարհի օրական խնդիրը,—ահա մի վսեմ կոչում որին արժանացաւ հայ կինը։ Բայց ինչ էք կարծում՝ այդ կանանց ամուսինների մտաւոր զարգացումն իրանց կանանցից ոչնչով չէ զանազանվում, նրանք կուրօրէն հաւատ են ընծայում այդ լուրերին և պատերազմ ի նկատի ունելով վաճառանոցի վերա իսկոյն բարձրացնում են ցորենի, գարու և այլ մթերքների գները. մէկը ցորեն է դիզում ամբարներում, միւսը գարի և երկրորդ ու երրորդը անպայման հետևում են նոցա, յուսալով որ վաղը մէկին տասը գնով կը վաճառեն, դեռ ցորենի սայլերը չը մտած քաղաք՝ քաղաքի ճանապարհին նրատած նրան են սպասում, կամ գիւղերումն են թափառում. այսպիսով Երևանի վաճառանոցի վերա յանկարծ բարձրացաւ ցորենի գինը, բայց այսօր չատերը խոստովանում են իրենց գործած խոշոր սխալի վրա։ Խալվարը 10 մ. ծախվող ցորենի գինը հասաւ 20—22 մ. գարու խալվարը ծախվում էր 6—7 մ. այժմ հասաւ 10—12 մ. և ազահաբար ժողովեցին հացի թանգութիւնը մաքարող վաճառականները. իսկ այսօր ընդհակառակ 22 մ. ծախվող ցորենը, 12 մ. ծախվող գարին հեղհեղուկ մոտենում են իրենց ունեցած նախկին գներին։ Թողնենք այս և խօսենք մի փոքր այն զարհուրելի անցքերի վերա, որոնք կատարվեցան և կատարվում են Փոքր-Ասիայում զետեղուած թշուառ հայ ազգի գլխին։ Վերջին բարբարոս անցքերը որոնք պատահեցին Հայաստանում, վերջին տանջանքները որ կրեց Ցաճկահպատակ հայ ժողովուրդը, այստեղ Երևանում ընդհանուր ցաւ է պատճառում ամեն ազգայուն սրտերի վերա։ Եթէ ստոյգ է Եօզդատի և այլ գաւառներում գործուած չարիքները որոնցով լցուած են այժմեան լրագրութեան թերթերը, ասացէք խնդրեմ մթթէ այդ ապրել է... Եւ դեռ ևս կան մարդիկ, այն ևս խմբագիրներ, որոնք յանդգնում են քարոզել թէ լռութիւնը խոհեմութիւն է։ Օսմանեան պետութեան մէջ, բարբարոսութիւնները դեռ երկար են տևելու։ Այսօր սլավոնական ազգը սուրը ձեռքին ազատութիւն և մարդկային իրաւունքներ է պահանջում, Ցաճկաստանը կամ կը խոնարհի նոցա պահանջի առաջ, կամ ներկայ պատերազմին տեղի է տալու ընդհանուր եւրօպական պատերազմ։ Սլավոնացիք երբ և իցէ, այսօր կամ վաղը դուցէ հասնեն իրենց ցանկացած նպատակին, եթէ ոչ ամբողջապէս, գէթ կիսով չափ, նրանց այսօրվան կռիւը ապահովացնում է սլավոնական ցեղի անդորրութիւնը և ապագայ դոյութիւնը,—բայց ով է մտածում Անատոլիայի քրիստոնեաների, այդ մօտ երեք միլիոն հայերի վերա,—ոչ ոք։ Դիցուք թէ Օսմանեան պետութիւնը հրատարակեց օրէնք որի զորութեամբ տէրութեան բոլոր հպատակները կը վայելեն հաւասար իրաւունք և արտօնութիւն, բայց ո՞վ կարող է երաշխաւոր լինել այն իրողութեանը, թէ Ցաճկաստանում թղթի վրա գրուած օրէնքը կարող է և մարմնանալ։ Ցաճիկները և նոցա հայի արիւնով ծարաւած զօրքը ուսումնասիրել են հայի կեանքը, նոքա լաւ են ճանաչում իրենց զոհը, գիտեն որ այդ բարոյապէս մեռած և սարկացած ազգը այն ժամանակն է մի փոքր ձայն հանում, երբ դանակը ոսկորին են հասցնում։ Խօսենք ոչ հեռու անցեալից՝ գերմանական և ֆրանսիական հիւպատոսների նահատակութեան օրից ինչ հարստահարութիւններ և չարիքներ չը կրեց հայը մահմետական տարրից՝ սպանութիւններ, աւազակութիւններ, կանանց պատիւ արատաւորելը,—դոքա բոլորը սովորական երևոյթներ էին. բայց երբ Եօզդաթի անցքի լուրը հասաւ հայի ականջին, նա նոր արթնացաւ քնից, և տեսնենք այդ քնից սթափվող ազգը կը դնի սպեղանի՞ իւր վերքերի վրա, թէ դարձեալ կը թողնէ նրան անխնամ, որպէս թողել է մինչև այսօր։ Թող համոզուած լինեն տաճկաբնակ մեր ազգայինք, այն ուղին որի վերայից նոքա գնում են, նրա վախճանում կորուստ է սպառնում նոցա, ձայն տուէք սիրելի հայրենակիցներ, աղաղակ բարձրացրէք, բողոքէք արդարութեան և մարդկային սուրբ իրաւանց անունով, բախեցէք փակուած դռները և նոքա չուտով կը բացուեն ձեր առաջ։ Ցիշեցէք՝ անզգայ դիակներ չէք։

Ա. Եր.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Тифл. Вѣстн.» լրագրին հեռագրով հաղորդում են ՄՈՍԿՎԱՅԻՑ, հոկտեմբերի 29-ից «Այսօր Թագաւոր Կայսրը ասեց դասակարգերի ներկայացուցիչներին, որ իր ամբողջ թագաւորութեան ընթացքում Նա ձգտում էր պահանջել արևելեան քրիստոնեաներին, այն ինչ որ պահանջում է իրաւունքը և արդարութիւնը, բայց ցաւելով բոլոր խաղաղական սկզբնաւորութիւնները ոչինչ հետևանքի չը հասցրին։ Այժմ հաւաքվում է Կ. Պոլսի մէջ մի կոնֆերէնցիա։ Ռուսաստանը կը պաշտպանէ իր պահանջները կոնֆերէնցիայում, բայց եթէ այդ պահանջները չը կատարվեն, Ռուսաստանը ստիպված կը լինի զէնք վերցնել։ Այդ հանգամանքում կայսրը հաւատացած է իր հրպատակների օգնութեան կողմից։ Այդ խօսքերը ընդունվեցան ոգևորված «ուրա» աղաղակներով։»

—

Մեզ գրում են ՄՈՍԿՎԱՅԻՑ. «Այժմ Մոսկվայի համալսարանը չատ լաւացել է, բոլոր պրոֆեսորները նոր են և լաւ գիտեն իրանց գործը։ Այժմ նոր կանոն են մտցրել՝ ամեն ուսանող պէտք է մի շարադրութիւն գրէ և դիսերտացիայի պէս պաշտպանէ։ Օպօնենտները (ընդդիմախօսները) լինում են թէ պրոֆէսորներ, թէ ուսանողներից ցանկացողներ»։

—

Մեզ խնդրում են յայտնել հետևեալը։ «Պ. Գուստով Բալանթարեանը, համալսարանի կանդիդատ, պարապում է ԹԻՖԼԻՍՈՒՄ անգլերէն և ֆրանսերէն լեզուների դասատուութեամբ, այս լեզուները ուսումնասիրել սկսողների հետ։ Հարցնել պ. Ցարութիւնեանցի տանը, Սապէօրնի փողոցում, Սապէօրնի կաղարմի դիմաց։»

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են՝ Սուլտայ գիւղից ոչ հեռու 6 աւազակ թուրքեր յարձակվելով 3 կաղակի վրա, մինին մերձ ի մահ վիրաւորել են։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ հաղորդում են մեզ հետևեալ թշուառանշաններ առաջին հարկաւորութեան պիտոյքների գնի մասին։ Ալիւրի պուդը արժէ 65 կոպէկ, ցորենի խալվարը 10 բուբլ, գարին 5 բուբլ։ Հացի գները օրից օր բարձրանում են։ Առնողների թիւը մեծ է։

—

Լոռու ՕՁՈՒՆ գիւղից հաղորդում են մեզ որ լուր կայ, իբր թէ այդ գիւղում կամենում են բաց անել մի ուսումնարան։ Որքան ուրախալի է այդ լուրը, ասում է թղթակիցը, այնքան էլ ցաւալի է, որովհետև ուսուցիչները, որոնք պէտք է դասատուութիւն անեն այդ ուսումնարանի մէջ, անփորձ են և անտեղեակ ուսուցչական պաշտօնին։

—

ՄՈՍԿՎԱՅԻՑ գրում են մեր լրագրին։ «Համալսարանի ուսանողները չատ վրդովեցան երբ իմացան թէ Ավստրիայի Պեշտ քաղաքի ուսանողները հանդէսով և հրապարակաւ յայտնել են իրանց համակրութիւնը Թիւրքիայի բարբարոսութեանը։ Մոսկվայի ուսանողները կամենում են հեռագիր ուղարկել Պեշտի ուսանողներին հետևեալ բովանդակութեամբ։ «Որովհետև դուք մոռանալով բոլոր մարդկային զգացմունքները, չէք համակրում սլավոնական ցեղերին, որոնք արիւն են թափում իրանց ազատութեան համար, մենք ձեզ հետ չենք կամենում ոչինչ յարաբերութիւն և համերաշխութիւն ունենալ։» Մի քանիս իրաւաբանական և բժշկական մասերի ուսանողներից յայտնեցին այն կարծիքը թէ քաղաքականութեան մէջ ամեն մարդ ունի իր համոզմունքը և դատն թէ այդ հեռագիրը անտեղի կը լինէր, աւելացնելով թէ պեշտացի ուսանողները կարող են պատասխանել թէ՝ «մենք մինչև այսօր ձեզ հետ ոչինչ կապ չունէինք և չենք էլ կամենում ունենալ, կարօտ չը լինելով ձեր համակրութեան.» Այն ժամանակ մեր ուսանողների պատիւը վայր ընկած կը համարվի։ Առ այժմս այսպէս է մնացել հեռագրի գործը և դեռ չեն պատասխանել, բայց վէճերը շարունակվում են, թէ ինչպէս հարկաւոր է պատասխանել պեշտացիներին։

—

Շնորհակալութեամբ ստացանք Գ. Երեցփոխեանցի ռուսաց-հայոց բառարանի երկրորդ տպագրութիւնը պ. Ա. Շահազիզեանցի ձեռքով հրատարակված և նոր փոփոխութիւններով հարստացրած։—ԹԻՖԼԻՍ։ Типогр. Главн. Управл. Намѣст. Кавказск. 1876 թ.—Մի ուրիշ անգամ կաշխատենք խօսել այդ գրքի վրա։

—

Այս օրերս մենք ներկայացրինք Կովկասեան Յէնդուական Կոմիտէին «Մշակ» լրագիրը չաթթը երկու անգամ հրատարակելու խնդիրքը։ Տարեկան գինը նշանակում ենք 7 բուբլ և համարներից մինը կը հրատարակվի, ինչպէս և առաջ հինգշաբթի օրը, միւսը երկուշաբթի օրը։ «Մշակի» պրօգրամը և գիրքը չեն փոխվի։ Երբ թոյլատրութիւն ստացած կը լինենք, կը յայտնենք։

—

Օրիորդ Սոֆիա Առաքելեան ուղարկում է մեզ ՇՈՒՇՈՒՅԻՑ հետևեալ յայտարարութիւնը որ խնդրում է մեզ տպել «Մշակի» մէջ։ «Վերջին ժամանակներս մեր մէջ սկսել են զբաղվել իդեական սեռի դաստիարակութեան ամենակարևոր խնդրով։ Մի քանի քաղաքներում բացվել են և բացվում են օրիորդական դպրոցներ, բայց դարձեալ մեր ազգի մեծ մասը դեռ համոզված է թէ «աղջիկն ինչ ա, ուսումն ինչ,» ամենևին չը հասկանալով, թէ աշխարհի մէջ երջանիկ ապրելու համար, պէտք է կրթված, զարգացած ընտանիքներ ունենալ և որովհետև ընտանիքին կենդանութիւն տուողը և նորա ծաղիկը կինն է, ուստի և կնկան տղամարդից աւելի հարկաւոր է կրթվել, ուսում ստանալ, որովհետև նա է այդ տղամարդները կազմողը և մեծացնողը։ Մեր հայ ընտանիքները համարեա թէ դեռ սարկական վիճակի մէջ են. տան մէջ տիրապետողը, հրամայողը՝ տղամարդն բռնապետական իշխանութիւնն է, որին ամենքը պարտ են հնազանդել անպայման կերպով. կինը համարվում է միայն այդ իշխանութեան համար, մեքենայական

գործիք։ Այսպիսի մի աննախանձելի վիճակ բարւոքելու համար մեր ազգային գրականութեան սեպուհ պարտաւորութիւնն է ժողովուրդի մէջ տարածել առողջ մտքեր, թէ ինչ ասել է ընտանիք, ինչ ասել են ամուսիններ, որոնք են տղամարդի և կնկայ առանձին պարտաւորութիւնները։ Ցանկանալով մասամբ լրացնել այդ պակասութիւնը, ես մտադիր եմ հրատարակել այդ առարկային վերաբերեալ մի ֆրանսիական գեղեցիկ գրքի թարգմանութիւնը այս վերնագրով։ «La famille, ses devoirs, ses joies et ses douleurs. 2 tomes. Paris.» Այս երկասիրութիւնը, որ 1865-ին հրատարակեց կոմս Դասպարինը, մի այնպիսի ընդունելութիւն գտաւ, որ մինչ 1872 թիւն 7 անգամ տպագրութեան արժանացաւ և մինչ անգամ գերմաներէն և անգլիերէն թարգմանվեցաւ։ Մենք առ այժմ կը հրատարակենք առաջին հատորը, որ բաժանված է երկու հատուածի և մեծածաւալ գիրք ունի, ըստ որում 361 էջ է, իսկ յետոյ և երկրորդը։ Ֆրանսերէնի (բնագրի) երկու հատորի գինն է 9 ֆրանկ։ Ցանկանալով, որ այսպիսի մի օգտակար գիրք շատ տարածվի մերոնց մէջ և գոնէ իր հրատարակութեան ծախսը ծածկի, ես որոշեցի բաժանորդագրութիւն բանալ հայ քաղաքներում, յուսալով, որ մեր հայերի գոնէ հակացող մասը, մանաւանդ իմ սիրելի քոյր—օրիորդները կը համակրեն այսպիսի մի ձեռնարկութեան։ Բաժանորդագրութեան գինն է 1 ռուբլ 20 կոպ., իսկ հրատարակութիւնից յետո 1 ռ. 50 կ. ընդունվում է մինչև փետրվարի 1-ը առաջիկայ տարու։ Օտարաքաղաքացիներ կարող են եղբօրս հասցէով դիմել ինձ։ Въ Шушу. господину Амбарцуму Араке-ліану.»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՊԱՆԻԱՑԻ ՄԱՍԻՆ

Ընթեցողը թող չը զարմանայ, որ ես, Գերմանիայի գործերը թողած, այս անգամ պիտի խօսեմ մի երկրի մասին, որ ինձանից հեռու է և որ ես անձամբ էլ չեմ ճանաչում։ Բայց մեր լրագրութիւնը դեռ այնքան կանոնաւորված չը լինելով, ինչպէս եւրոպական մամուլը, մենք իրաւունք չունենք միայն այն երկրով զբաղվել, որի մէջ ապրում ենք և անտես առնել մնացած երկիրները, որոնք ներկայացնում են որ և իցէ հետաքրքրական և համակրական շարժումներ առաջադիմութեան ճանապարհի վերա։ Աշխատանքը դեռ բաժանված չէ մեզ մօտ և մենք նամակագրողներ ամեն երկիրներում չունենք։

Այսքան թող բաւական լինի, որ մեկնի իմ այսօրվայ նամակիս նիւթը, որին կարող եմ աւելացնել, որ յաջող պայմաններ ինձ առիթ են տալիս խօսել այսպիսի հեռաքրքիր մի երկրի վերա ինչպէս Սպանիան է։

Ընթերցողը կը յիշէ, որ 1868 թւի հանրապետութիւնը այն դժբաղդ եղբ ունեցաւ որ Սպանիան ստիպված եղաւ վերջապէս կրկին ընդունել այն կառավարութիւնը, որին արտաքսեց։ Արիստոկրատիայի ինտրիգաները կրկին Սպանիայի գահը բարձրացրին այն ընտանիքը, որի տակ այնքան երկար ժամանակ խեղճ երկիրը ծանր լուծ էր տանում։ Դոն Ալֆոնսо XII մի երեխայ լինելով, հասակնալն է որ նա միայն մի երկրորդական դեր պիտի խաղար այն կուսակցութեան ձեռքում, որ նորա անունով յանձն առաւ կառավարել երկիրը։

Դոն Ալֆոնսоի գահը բարձրացնելու ժամանակը մի ծանր և դժուար րոպէ էր Սպանիայի համար։ Ամեն կողմից թշնամիներ տանջում էին երկիրը՝ մի կողմից գաղթականութիւններից (Colonie) մինի մէջ, արդիւնաբեր և հարուստ Կուբա կղզում ապստամբութիւնը իր ամբողջ զօրութեամբ պաշտպանվում էր, միւս կողմից մի այլ գահախնդիր (pretendant) կրօնի և անսխալական պապի անունով ապրստամբել էր երկու երեք գաւառներ և իր բարբարոսութիւններով ահ էր գցում այս գաւառներին սահմանակից բուն սպանիական երկիրների վերա։

Դոն Ալֆոնսоի կուսակցութիւնը իրան պահպանելու և իր թագաւորին գահը հաստատելու համար ի հարկէ ստիպված էր, եթէ ուզում էր համակրութիւն շարժել ժողովրդի մէջ, մի ընթացք բռնել որ աւելի պիտի համապատասխան լինէր ժողովրդի ցանկութիւններին։ Կառավարութիւնը սկսեց շողոքորթել ժողովրդին իրան ազատամիտ ցոյց տալով և փոքր փոփոխութիւններով ընդունելով իրրև իր նախագիծը այն սահմանադրութիւնը որ մշակված էր 1869 թւին հանրապետական կառավարութիւնից։ Վերջապէս Դոն Ալֆոնսоի կառավարութիւնը իրան ձևացրեց շատ ազատամիտ...

Սպանիան մոռացաւ որ Դոն Ալֆոնսо Բուրբոնեան ցեղին էր պատկանում, մոռացաւ, որ նա իսկ այն թագուհու որդին էր, որին մի քանի տարի առաջ գահից գլորեցրեց իր անձնուն, ճնշող և անբարոյական կառավարութեան համար։ Այս բոլորը մոռացաւ Սպանիան և երեխայ-թագաւորի մէջ տեսնում էր միայն մի սիրը,—որ ազատող պիտի հանդիսանար կղերական կուսակցութիւնից, նորա շահասէր և մոլեռանդ ցանկութիւններից, նորա բռնաւոր և ստրկացնող, ամենայն ինքնուրոյնութիւն ճնշող, ամենայն ազատ միտք սպանող ձգտումներից։ Սպանիան ընտրելու ունէր երկու ուղղութիւնների մէջ՝ մի ազատամիտ միապետութեան 1869 սահմանադրութեան հետևող, և մի սև, ճնշող, կղերական, պապական, անսխալական ինքնակալութեան մէջ. նա պիտի ընտրէր Դոն Ալֆոնսоի և Դոն Կարլոսի մէջ—նա ընտրեց առաջինին և անկեղծութեամբ իր ամբողջ ոյժերը նուիրեց դորան և օգնեց արմատախիլ առնել միջնադարեան կղերական բնաւորութեամբ լի, ինկվիզիցիան պաշտպանող Դոն Կարլոսի կուսակցութիւնը։

Կարլիստների պատերազմը վերջացաւ։ Կուսակցային հարցն էր միայն անհանգստացնում Սպանիան և ամեն օր նոր զօրքեր էր պահանջում։ Զօրքը պահանջում էր նոր զէնքեր, նոր հարկեր։ Բացի կուբայի ապստամբների դէմ պէտք էր և մի նշանաւոր զօրք պահպանել Բասկեան (Basque) գաւառներում, որոնք դուցէ կրկին պիտի անհանգստացնէին ամբողջ երկիրը իրանց կղերական և կարլոսեան ձգտումներով։

Զօրքը իր ձեռքին ունենով Դոն Ալֆոնսоի, կամ աւելի լաւ է ասել մինիստր-նախագահ պ. Կանովաս դէլ Կաստիլիոի (Canovas del Castillo) կառավարութիւնը, կարծեց որ էլ այսուհետև չէ կարող ոչինչից վախենալ երկրի կողմից և որ կարող է հարկաւոր րոպէում արգելել ամեն շարժում, լինի նա կարլոսեան կամ ազատական։ Փոքր առ փոքր կառավարութիւնը նկատեց, որ պատերազմելով կարլիստների դէմ նա մի և նոյն ժամանակ թշնամանում էր և նրանց անսխալական տիրոջ հետ։ Այս դրութիւնը պէտք էր փոխել և մտնենալ պապին, որ միշտ պատրաստ էր կրկին ամենայն միջոցներով նպաստել կարլիստներին, որ վերջապէս Սպանիան կրկին ընկներ լիակատար և անպայման ազդեցութեան սուրբ կաթոլիկ եկեղեցու, այսինքն, մեր խօսքերով, թոյլ տար կղերականներին իրան կրկին հարստահարելու։

Դորա համար մի միջոց կար—դա էր պապին ցոյց տալ, որ նրանք էլ (ալֆոնսիստները) կարլիստներից պակաս ջերմեռանդ չեն եկեղեցուն հպատակվելու գործի մէջ և ահա փոքր առ փոքր սկսվեցան կրկին յարաբերութիւնները Վատիկանի հետ, նախ պահպանելով անկախութեան ձևը, յետոյ աւելի և աւելի ենթարկվելով անսխալականի պահանջներին, մինչև որ վերջը պ. Կանովաս դէլ Կաստիլիо մի հրաման հրատարակեց, թէ սահմանադրութեան 11-դ յօդուածը, որ դաւանութիւնների կատարեալ ազատութիւն էր շնորհում ամբողջ թերակղզու և սպանիական գաղթականութիւնների մէջ, պէտք է այնպէս հասկացվի թէ՝ ամենայն դաւանութիւնները, որոնք տարբեր են կաթոլիկ եկեղեցուց, իրաւունք չունեն հրապարակաւ որ և իցէ ցոյցեր անելու կամ ծիսակատարութիւններ վարելու և որ նրանք ազատ են միայն ժամասացութիւնը կատարելու իրանց եկեղեցիներում և գերեզմանատներում, իսկ նրանց արգելվում է ամեն տեսակ հրապարակական թափօրներ, ժամասացութեան մասնակցելու հրաւէրները, մինչև անգամ լրագիրների միջնորդութեամբ յայտարարութիւններ ժամասացութեան ժամի մասին....

Գերմանական և Անգլիական եկեղեցիների բողոքները զուր եղան. գերմանական և անգլիական կառավարութիւններն էլ դորանով միայն բաւականացան որ մեզմ բողոքներ ուղարկեցին պ. Կանովաս դէլ Կաստիլիոին, բայց իրանք այլ հարցերով (արևելքի) զբաղած լինելով, չը կրկնեցին իրանց պահանջները։ Իսկ պ. Կանովաս այսով քաջալերված մինչև անգամ իր համաձայնութիւնը տուեց այն պահանջին, որ հրատարակեց Մաոնի (Mahon) արքեպիսկոպոսը՝ որ բողոքական երեխաները չընդունվին այն ուսումնարանների մէջ, ուր ուսում են առնում կաթոլիկ կրօնին պատկանող երեխաները։

Էլի մէկ քայլ—և Սպանիան հասնում էր պ. Կանովաս դէլ Կաստիլիոի կառավարութեան ժամանակ գրեթէ այն դրութեանը, որի մէջ դա գտնվում էր Ֆիլիպ II-ի ժամանակ. էլի մէկ քայլ—և կարող էր մոցնվել տասնուվեցերորդ դարու վերջում նոյնքան սաստիկ ինկվիզիցիան, ինչպէս նա կար իր ծաղկման ժամանակ։

Տէրութեան հրամանով, որ կառավարում է իրը թէ ամենազատամիտ սահմանադրութեան միջոցով, որ թոյլ է տալիս լիակատար ազատութիւն խօսքին, ժողովներին, որ ընդունում է խղճի և դաւանութեան անպայման ազատութիւնը—այս կառավարութեան հրամանով ոչ մի մասնաւոր նամակ չէր դուրս գալիս և չէր մտնում Սպանիա, առանց որ նորան բացանէին, ոչ մի հեռագրական լուր չէր դուրս գալիս երկրից, առանց որ դորա բովանդակութիւնը յայտնի չը լինէր կառավարութեանը։ Համալսարանների 70 պրոֆեսորներ իրանց տեղերից զրկվեցան, որովհետև բողոքերին կառավարութեան միջամտութեան դէմ բարձր ուսման գործերում և մանաւանդ որ իրանց պարտաւորութիւն չէին համարում վարել եկեղեցի այն ամեն դէպքերում, երբ այդ նրանցից պահանջում էին պ. պ. կղերականները....

Այսպիսի պայմանների մէջ անկասկած պէտք էր սպասել մի զօրեղ բողոքի երկրի, և մանաւանդ ազատամիտ կուսակցութեան կողմից, որի ամենանշանաւոր անդամները ստիպված էին երկիրը թողնել, եթէ չէին ուզում ընկնել կառավարութեան ձեռքը և ուրեմն աքսորանք գնալ Ֆիլիպպինների կղզիները, ուր, ինչպէս յայտնի է, ոչ մի եւրոպացի կարող չէ դիմանալ կլիմային։

Այժմ լրագիրները հաղորդում են, որ այս բողոքը վերջապէս յայտնվեցաւ և դորա առաջնորդներն են պ. Ռուիս Սորրիլիա (Ruiz Zorrilla) նախկին մինիստր-նախագահ թագաւոր Ամադէոյի ժամանակ և պ. Նիկոլաս Սալմէրոն (Nicolas Salmeron), նախկին նախագահ Սպանիայի հանրապետութեան։

Թէ այս շարժման մասին, թէ այն շրջաբերականի մասին, որ այս երկու պարոնները հրատարակեցին Փարիզի մէջ, իրրև մի նախագիծ հանրապետական կուսակցութեան (el partido republicano reformista)—միւս անգամ։

29 հեկտ. Ա. Արծրունի

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ

Վերջին օրերս տեղս պատահած ցաւալի անցքերն կը վկայեն անժխտելի կերպով թէ Տաճկաստանի վիճակը յուսահատական է։ Շատ Տաճիկ կարդացողց (մօլլա կամ սոֆտա) կը վկայեն թէ Տաճկաստանի վերջն եկած է. այսպէս կը թարգմանեն Կուրանի մէջ գրուած մի մարգարէութիւն որ տաճկաց կառավարութիւնն մինչ վեց հարիւր տարիներու մօտ պիտի տեւէ. եթէ այս անգամ սոյն մարգարէութիւնն ստուգուի, ես կարծեմ թէ Տաճկաստանի մէջ, ամեն ոք հրէից Մէսիայի գալստեան սպասելուն պէս՝ նորա կործանմանը համար խունկ կը ծխէ և ուշանալուն համար կը կասկածի զի մի գուցէ Զաքարիայի նման հրաշք մը տեսած լինի Տաճկաստան։

«Հայրենիք» անուն լրագիրն իւր 314 թւոյն միջոցաւ հրատարակած էր մի նամակ զոր ընդունած էր իւր Տրապիզոնի թղթակցէն. նամակագիրը կը պատմէ խիստ սրտաշարժ կերպով տեղացի գեղջուկ ժողովրդեան ի հարկահանաց կրած նեղութիւնները. տեղացի միւս թերթերը այդ մասին իւրեանց թղթակիցներէն տեղեկութիւն արած չը լինելով, կարևորութիւն չեն տար, ուստի և կը լռեն այդ մասին. բայց դարձեալ մի երկրորդ յօդուած երբ կը տեսնուի «Արարատ» լրագրոյն մէջ Տրապիզոնէն գրուած, այլ ևս գործը կը ստուգուի, որով խմբագիրք ևս կը գրեն պէտք եղածը։ Այդ խմբագրաց մէջ քաջագոյնն հանդիսացած է «Մեհմուայի Հավադիս» լրագրի խմբագիր՝ պ. Մարգարեան. այլ ցաւ է նա ևս մեզ ըսել որ Բ. Դուռը չէ կրցած մարսել այդ հարուածը, ուստի անմիջապէս տպագրական տեսչութեան կողմանէ հրաման գնացած է որ տեսչութիւնն զիրենք կուզէ, ուստի երեք խմբագիրք Մելիքեան (Հայրենիքի), Այվատեան (Արարատի) և Մարգարեան իրենց եկած հրամանին հնազանդելով՝ իսկոյն կը փութան տեսչութեան երթալ։ Տեսուչը՝ Պլաք-պէյ, զխմբագիրս ընդունած ատեն քաղաքավարութիւնը մէկ կողմը կը դնէ և կը սկսի կծու յանդիմանութիւններ ընել, որով խմբագիրք ևս չը կարենալով այս նախատանաց տանել, կը ստիպուին դէթ իւրեանց խիղճը յանդարտեցնելու զանի խօսք ըսել։ Պլաք-պէյ կը բարկանայ, և կը հրամայէ որ զանոնք Եպարգոսին տանեն (կարծեմ ժամանակին կարգադրուած բան մ՝էր այս)։ Երբ Եպարգոսը այս մարդիկը կը տեսնայ, իւր ունեցած ատելութեան և վրեժխնդրութեան զգացմունքը կը յայտնվի և մոռանալով իւր փափուկ պաշտօնը այսպիսի փափուկ ժամանակի մը մէջ, մինչև իսկ կը համարձակի զանոնք հայրենեաց թշնամիներ, մատնիչներ անուանել. մարդիկ էին իւր դիմացիները, մարդիկ՝ սրտի և պատուոյ տէր, և բնականաբար լեզուն սրտին համեմատ կը խօսէ իսկ մի այսպիսի պարագայի մէջ, ուստի խմբագիրք ևս կը պատասխանեն՝ թէ իրենք այդ հարկահանաց գործած չարութեանց ստոյգ լինելն ապացուցանող նամակներ ունեն, իրենք իրենցմէ չեն հնարած այդ լուրը։ Եպարգոսը երևի իւր մանկութեան օրերը յիշելով՝ կնավորներուն այս համարձակութիւնը ոճրագործութիւն մը կամ մեղք մահացու համարելով, վերջապէս ինչպէս կուզես այնպէս ըսէ, կը հրամայէ որ նոցա թևերը կապեն և տանեն ոստիկանութեան դուռը բանտարկեն։ Զեզ կը թողում այդ մտածել, քանի տխուր էր այդ խեղճերուն վիճակը երբ 40—50 ոստիկանք կը թափեն նոցա վերա, և կը սկսեն ոմանք հայհոյել, ոմանք գրպանին որոնել, վասն զի Նորին Վսեմութիւնն այսպէս հրամայեր է, ով գիտէ, գուցէ կարծեցեալ քօմիթէն գտած լինելու յոյսով։ Այս միջոցին ոստիկանաց կընկերանան դարձեալ մի քանի ոստիկաններ, և խեղճերուն վերա եղած չեղած վիրաւորանքներ կը թափեն և երբ խմբագիրք, մասնաւորապէս պ. Այվատեան, կընդիմանայ, բռան հարուածներ կը պատասխանեն, որով յուսահատ կը թողուն որ ուղածնին ընեն։

Հոս խորհրդածութեան համար մի կարևոր կէտ կայ, և այն ալ սա է որ Եպարգոսը այս մարդիկները ձերբակալած է իբրև ժողովրդեան գրգռիչներ՝ իբրև սուտ լուրեր տարածողներ։ Ենթադրենք թէ այդ խմբագրաց գրուածները սուտ էին, ենթադրենք նա ևս վայրկեանի մը համար թէ այդ խմբագիրք ժողովուրդը կը գրգռեն, բայց երբ օտար խմբագիր մը, որ օտար երկրի մէջ, ազատ երկինքի մը տակ կապրի, ուր իրաւունքը հաւասարապէս կը յարգուի, ուր ժողովրդեան ձայնը լսող ականջներ չեն պակսիր, ուր վերջապէս մարդկութեան օրէնքը պէտք եղածին պէս կը յարգուի, ինչ պիտի ըսէ կառավարութիւնը երբ այդ խմբագիրը այս արևու պէս պայծառ և յայտնի լուրը հրատարակելէն զկնի ըսէ՝ թէ այս լուրը հրատարակող տաճկաստանցի հայ թերթերի խմբագիրները Եպարգոսին նստած սըրահէն անմիջապէս դուրսը կաքսորվեն, կը ծեծուին, և ոճրագործներու նման թեւերնին կապուած՝ բանտ կը տարուին։ Իրաւ Տաճկաստանի համար ասկէ մեծ յաղթանակ, քան զայս առաւել փառաւոր գործ չը կրնար լինել։

Ցիչեալ երեք խմբագիրք, ինչպէս լսած եմք, Տրապիզոն պիտի երթան և հոն դատուին պիտի։ Բանտէն զկնի աքսոր ըսեն՝ աւելի լաւ կըլլայ։

Հոկտ. 22 ***

ՆԱՄԱԿ ԷՐԶՐՈՒՄԻՑ

Հոկտեմբերի 20

Այս անգամ գրում եմ ձեզ մի կարճ նամակ։ Ինչ հարկաւոր են երկարաբանութիւններ, որտեղ սարսափելի, անասելի բարբարոսութիւնների անթիւ իրողութիւններ իրանք իրանց համար են խօսում.... Բաւական չէ որ Էրզրումի չորս կողմ գիւղերում թիւրքաց զօրքը հարստահարում է հայերին, այժմ նոյն իսկ Էրզրում քաղաքում թիւրքերը սկսում են կախ անել հայ նշանաւոր և հարուստ անձանց, պատճառ բռնելով որ իբր թէ նրանք Ռուսաստանի հետ յարաբերութիւններ ունեն։ Այս օրերս խեղդեցին առանց հարց ու փորձի Բաստուրմաճան անունով մի հարուստ հային, որի հայրը դեռ անցեալ տարի սպանված է եղել թիւրքերի ձեռքով ցերեկ ժամանակ, անթիւ բազմութեան մէջ և որի սպանողները անպատիժ մնացին։ Այդ Բաստուրմաճան ընտանիքը Էրզրումի մէջ ամենահարուստ մի ընտանիք էր և նորա շնորհով անթիւ հայ աղքատ գերդաստաններ ապրում և կերակրվում էին։ Ասում են որ տեղական փաշան է հրամայել հայերին կոտորելու։

Էրզրումի մօտակայ գիւղերից մինի մէջ թիւրքաց կանոնաւոր զօրքը անցնելով, կոտորել է մի ամբողջ հայ գիւղական ընտանիք։

Ն.

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Պ. Ց. Տէր-Գրիգորեան գրում է մեզ Երևանից՝ «Մշակի» № 39 մէջ տպված Երևանի նամակում մտել է մի սխալ։ Земскій сборъ հարկից մնացորդ կայ մօտ 100 հազար բուրլ և ոչ թէ 600 հազար, ինչպէս որ տպվեցաւ։

***

Մեզ խնդրում են յայտնել հետևեալը՝ «Նորեռում Կ. Պօլսից վերադարձաւ Թիֆլիս, մեր հայ հասարակութեանը ծանօթ ատամնաբոյժ պ. Ֆըրանդիլ Միւլիւքեան։ Ինչպէս լսում ենք, պարոնը բերել է իր հետ նոր և ընտիր առարկաներ իր արհեստին վերաբերեալ, նոյնպէս և ատամ-

ների բժշկութեան համար նոր և կատարելագործված դեղեր։ Պ. Միլիւքեանի բնակարանը գտնվում է Դվորցովի փողոցի վրա, պ. Սարաջեվի տան, վերին յարկում, դաւիթում։

***

«Մշակի» № 39 համարում Մոսկվայից ստացած լուրի մէջ սխալմամբ տպվել է որ ցուրտը հասնում է—30° բէօմիւրի, իսկ պէտք է լինէր—13°.

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—Տագանրօգ. Կ. Խ. Այժմ ստացանք 3 բուբլ։

—Երևան. Յ. Տ. Գ. Ուղարկեցինք «Восточный Вопросъ» բրօշիւրը։

—Ախալքալաք. Բ. Պ. Ուղարկեցինք նոյն բրօշիւրից 15 հատ, ինչպէս որ պահանջել էք։

—Մոսկվա. Լ. Խ. Ուղարկված 7 հատ բրօշիւրներից, 5 հատ խնդրում ենք հասցրէք պ. Ք-ին։

—Մոսկվա. Ս. Ե. Պարոն Ա. Ա-ու հասցէն այս է՝ Mineralogisches Institut der Universität in Strassburg i/Els.

—Պիատիգորսկ. Բ. Խ. Ուղարկեցինք ձեզ «Մշակի» բոլոր համարները, ստանալով ձեզանից 5 բուբլ։ Բայց № 30 սպառվել է։ Մենք մեղաւոր չենք որ ուշ էք գրվել։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐԾԱԹԵԱՅ ԻՐԵՂԷՆՆԵՐԻ

ՄՕՍԿՎԱՅԻ

գործարանը

Գ. ՎԱՅՆԳԱՐՏԻ։

Ընդունում եմ զանազան տեսակի պատուէրներ արծաթից՝ թէյի և սեղանի սերվիզներ, եկեղեցական իրեղէններ ոսկեզոծ և առանց ոսկու, կարող եմ ոսկեզոծել, արծաթով ծածկել և նորոգել հին արծաթեայ իրեղէններ։ Նոյնպէս ընդունում եմ՝ պատուէրներ զանազան նշաններ գործելու՝ զիւղական տանտէրերի, անտառապետների, ոստիկանների, գաւառական ատարշինների և զանազան ընկերութիւնների համար գործարանների գներով։

Յոյս ունեմ՝ որ յարգելի հասարակութիւնը գոհ կը մնայ՝ ինչպէս պատուէրների արժանութեամբ այնպէս էլ աշխատանքի կատարման ճշդութեամբ և արագութեամբ։ Հասցէն ԳՕԼՕՎԻՆՍԿԻ պրօսպէկտի վրա, Անտոնովի տանը։ 1 (6)

Ծախվում են **ԿԱԼՈՒԱԾՆԵՐ**, որոնք առաջ Օրբէլեանի իշխաններին էին պատկանում, իսկ այժմ Բէզակ ժառանգուհիներին։ Կալուածները բաղկացած են անտառից և արօտատեղերից։ Այդ հողերը գտնվում են Բէլի-Կլիչից ոչ հեռու և հետևեալներ են՝ Շահնազար, Պիտարէտ, յեսոյ՝ Պողոս-Կիսան և արօտատեղերը (Սաբաքաս)։ Ամբողջ հողերի տարածութիւնը 8 դէսիատինից աւելի է, ծախվում են և մաս մաս։

Պայմանների և գնի մասին հարցնել ԹԻՖԼԻՍՈՒՄ, Իվանովի ընթերցարանում, պ. ԳՕՆՉԱՐՕՎԻՑ։ 1 (3)













Հաղարներ անձինքներից երկու տեսի իրանց գեղեցիկ մազերով պարտական են միայն արտասահմանում վաճառվող այնպէս անուանված ՐՈՒՍԱԿԱՆ ԽԻՆՕԳԼԻՑԵՐԻՆԻ ՊՕՄԱԴԱՑԻՆ, որ մազերը բուսնել է տալիս։ Այդ պօմադը բժշկական շատ հեղինակութիւններից փորձված է և ունի վկայական թղթեր պ. Կլեչինսկուց որ Վիէննայի Լանդգրիֆսի քլինիայի պրոֆէսօր է և նոյնպէս Մոսկվայի բժշկական վարչութեան թոյլատուութիւն։ Նա ունէր մեծ աջողութիւն և վերջին ժամանակ հեռացուած էր Մոսկվայի բժշկական վարչութենից որ տուեց նրան իր հաւանութիւնը։ Կանոնաւոր գործածութեան ժամանակ, մինչև անդամ մազերից մերկ դատները ծածկվում են մազերով։ Այդ պօմադը պնդացնում է կաշին, պահպանում է մազերը թափվելուց, մազերին տալիս է գնական տեսք և փայլատուութիւն և իր անուշահոտութեան պատճառով, որ նրա լաւ յատկութիւններից մինն է, կարող է զարդարել ամենաչքեղ տուալէտի սեղանը։ Այդ բոլոր յատկութիւնները իմ արդիւնքի, իրաւունք են տալիս ինձ յուսալ Ռուսաստանումն էլ նրա ընդարձակ տարածման և պատեալի հասարակութենից լաւ ընդունելութեանվրա։

ԳԻՆԸ ՄԻ ՇԻՇԵԻ ՀԱՄԱՐ 2 ՐՈՒԲԼ

Իւրաքանչիւր շիշի հետ տրվում է և պօմադի գործածութեան նկարագրութիւնը։

ՊՕՄԱԴ

„PASTA EUGENIE"

Այդ պօմադի հնարող տիկինը որ յայտնվեցաւ «Pasta» անունով, պատիւ ունի յայտնել յարգոյ հասարակութեան որ «Pasta Eugénie» այժմ ստացված է և ծախվում է Թիֆլիսում պ. ԼԱՆԿՕՒ մուզիկային մագազինում, Արծրունու տանը, Վլադիկավկասում պ. ՍԵԳԱԼԻ մօտ, իսկ Սատավրապոլում պ. ԿՈՒՐԻԼՋԷՆԿՕԻ մօտ, որտեղ ծախվում են և մնացած այստեղ յիշված տրգիւնները։ Այդ պօմադը չնայած որ նոր է նորանով, որ նրա գործածութեան կարճ ժամանակից յետոյ երեսը խաակվում է զանազան բիծերից, անմաքրութիւններից և խոցերից և ստանում է երիտասարդական հասակին յատուկ թարմութիւնը և գեղեցկութիւնը։ Առաջարկվում է այն անձանց որք կամենում են խաակ և սպիտակ երեսի գոյնը ստանալ։ Հնարողը հրաչխատոր է պօմադի ներգործութեան հաստատութեան համար։ Գրաւական կարող են լինել առնողները համար և այն վկայագրերի որք ստացված են թէ Վիէննայի քլինիքոս պրոֆէսօր պ Կլեչինսկուց, թէ Մոսկվայի բժշկական վարչութեան թոյլատուութիւնը։

ՄԻ ՍՐՈՒԱԿԻ ԳԻՆԸ 1 Ր. 60 Կ.

Որի հետ տրվում է և նրա գործածութեան նկարագրութիւնը։

Իւրաքանչիւր սրուակի վրա ինչպէս մազերի համար, այնպէս «Pasta» գտնվում է մի առանձին դրօշմ «Ամարի» պատկերով և հնարողի ստորագրութեամբ որի վրա առնողներին խնդրում ենք դրամանք ուշադրութիւն դարձնել։

Ց. Գ. «Pasta» պօմադը առաջարկվում է և նոցա, որք թէև չունեն գանազան վերև յիշված կաչու հիւանդութիւններ, բայց կամենում են ունենալ խաակ և թարմ երեսի, վզի և ձեռքերի գոյնը։

Bertha Ries

ՁԵՌՔԵՐԻ

ՊՕՄԱԴ

Նայի փափկութիւն և սպիտակութիւն։

Սրուակի գինը 1 ր. 30 կոպ.

ՄԱԶԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԸ, թէ մոդ խարտեաշ, թէ սև, որ ներկում է 10 բոպէի միջոցում և չէ կորցնում իր տևողութիւնը 6 շաբաթվայ ընթացքում։ Արկղիկը 3 բուբլ։

ՏՕԿԱՑԵԱՆ ԲԱԼԶԱՄ, հատատ միջոց կոչտերի և կաչու կոչտութիւնների դէմ։ Սրուակը 60 կ.։

33 (50)

ԱՄԵՆԱՀԱՍՏԱՏ ՄԻՋՈՑ

ՓՈՔՐ ԵՒ ՄԵԾ ՄԿՆԵՐ, ԽԼՈՒՐԴՆԵՐ ԵՒ ՄԻՋԱՏՆԵՐ ՈՉՆՉԱՑՆԵԼՈՒ։
ԲԻԱ ԳՈՒՏՄԱՆ ՔԻՄԻԿՈՍ ՊԷՇՏԻՑ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՏԱՆ ՀԱՅԹԱՅԹԻՉ

Որ մի քանի արտասահմանեան պալատներից արտօնութիւններ ունի։

Պատիւ ունեմ առաջարկել թէ հասակութեանը, թէ պ. պ. վաճառականներին ինձանից հնարած ամենանոր և մեծ ներգործութիւն ունեցող միջոցներ՝ մկներ, խլուրդներ և ամեն տեսակ միջատներ, ինչպէս օրինակ սև ուտիճ (տարական) ցեց, մրջիւն, բաղլինջ, լու և այլն, ոչնչացնելու համար։ Ցիշեալ միջոցները, որք իմ գիւտերն են և ինձանից պատրաստված են, ստացան կատարեալ հաւանութիւն և յայտնի են ամբողջ Եւրոպայում, որի համար և ունեմ վկայագիր։

Այդ միջոցները արժանացան Մոսկվայի բազմարվեստեան հանդիսում 1872 թ. ին մեծ արծաթեայ մեդալի և Վիէննայի աշխարհահանդիսում 1873 թ. առաջադիմութեան համար մեդալի (Fortschritts—Medaille):

ՀՆԱՐՈՂԸ ԵՐԱՇԽԱՒՈՐ Է ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՍՏԱՏ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ։

Մեծ քանակութեամբ առնողներին զիջումն կը լինի։

ԳՆԵՐԸ՝

Մկների և խլուրդների դէմ գեղը մի սրուակի համար 1 ր. 50 կոպ.։ Փոչին սև ուտիճների, ցեցի մրջիւնների և լուերի դէմ 1 բուբլ։ Սարա հատ հարկաւոր է առնել և գուտապերչի փաքրիկ մի-քենանոր իւրաքանչիւրը 60 կոպ.։

Հեղուկ բաղլինջների դէմ մի սրուակ 1 ր.։

Այդ միջոցը ունի անուշ հոտ, բիծեր չէ անում և յանկարծակի է ներգործում, որի համար հրաշխաւոր է գլխաւոր Դէպօ։

Հատատ միջոց ԿՈՇՏԵՐԻ և կաչու կոչտութիւնների դէմ, մի սրուակ 60 կոպ.։

Գլխաւոր դէպօ ԹԻՖԼԻՍՈՒՄ պ. ԼԱՆԿՕԻ մուզիկային մագազինում, Դվորցովի փողոցում, Արծրունու տանը։ ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍՈՒՄ պ. ՍԵԳԱԼԻ մօտ, իսկ ՍՏԱՎՐԱՊՕԼՈՒՄ պ. ԿՈՒՐԻԼՋԷՆԿՕԻ մօտ։

Օտարաքաղաքացիները թող բարեհաճեն ճանապարհի ծախսը վճարել յիշեալ միջոցները ուղարկելու համար։ Կարող են թէ փողով, թէ փոստի մարկաներով։ 33 (50)

Дозволено цензурою 3 Ноября 1876 г. Тифлисъ
Типографія Энфіаджіанцъ и К-о
Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ